



Կարգապահական գործ թիվ ԿԳ-18147

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2019 թվականի մայիսի 08-ի թիվ 92-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/58-Ա

**ՓԱՍՏԱԲԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Արայիկ Ղազարյանի, Խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրջյանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Վարուժան Վարդանյանին (արտոնագիր թիվ 1148) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Փաստաբան Կարինե Բաղդասարյանը (**այսուհետ նաև՝ Դիմող**), դիմելով Պալատ հայտնել է, որ փաստաբան Վարուժան Վարդանյանի հետ թիվ ԵԱԴԴ/0586/02/16 քաղաքացիական գործով հանդիսանում են հակառակորդ կողմերի փաստաբաններ, և որ նշված գործի քննության ընթացքում բազմաթիվ անգամներ բախվել է փաստաբան Վարուժան Վարդանյանի՝ փաստաբանին ոչ հարիր վարքագծի հետ, մասնավորապես գործի քննության ընթացքում բազմաթիվ անգամներ Վարուժան Վարդանյանը հայտարարել է, թե փաստաբան Կարինե Բաղդասարյանն այս կամ այն օրենքը չգիտի, իրավական դաշտին չի տիրապետում և այլն:

Դիմողը նշել է նաև, որ փաստաբան Վարուժան Վարդանյանի 21.08.2018 թվականի վերաքննիչ բողոքում խեղաթյուրվել է իր՝ որպես հակառակորդ կողմի փաստաբանի վարքագիծը, ներկայացվել է մի իրավիճակ, որը կոպիտ կերպով խախտում է Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 5-րդ գլխի կանոնները:

Կարինե Բաղդասարյանը դիմումին կից ներկայացրել է վերաքննիչ բողոքի պատճենը, որի 4-րդ և 5-րդ էջերում առկա են հետևյալ պարբերությունները.

«Վերոնշյալ պայմաններում (մանրամասն հիմքեր հիմնավորումները ներկայացված են ներքևում) Դատարանի (դատավոր Նաիրա Ավետիսյանի) կողմից նման վճռի կայացումը թույլ է տալիս կատարել գնահատողական դատողություն, որ սույն գործով դատավոր Նաիրա Ավետիսյանը չի եղել անկողմնակալ և անաչառ: Բացառված չէ, որ

վերջինս ունեցած լինի նաև որևէ շահագրգռվածություն սույն գործով վճիռ կայացնելիս և այսպես եղած լինի կոռուպցիա (ոչ թե որևէ կոռուպցիոն դիսկ, ինչպես ընդունված է ասել հաճախ, այլ հենց կոռուպցիա: Սա պետք է պարզվի, իհարկե, համապատասխան մարմինների կողմից): Նման գնահատողական դատողություն կատարելու համար առիթ է հանդիսանում ևս մեկ ուշագրավ իրադարձություն, որը տեղի է ունեցել սույն գործով վճռի հրապարակման օրը 20.07.2018թ.-ին և որի մասին հարկ ենք համարում հայտնել նաև ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանին.

20.07.2018թ.-ին ժամը 12:00-13:00-ի սահմաններում ինձ պատասխանողների ներկայացուցիչ փաստաբան Վարուժան Վարդանյանիս, զանգահարեց սույն գործով հայցվորների ներկայացուցիչը (Կարինե Բաղդասարյան): Նա ասած, թե արդյո՞ք ես գնալու եմ այդ օրը դատարան վճռի հրապարակման նիստին, ինքը չի կարողանալու գնալ և բացի այդ էլ զանգում է դատարան, չի կարողանում կապվել դատարանի կազմի հետ, որ տեղեկություններ ստանա: Ես պատասխանեցի, որ այո՝ ես ժամը 17:30-ին լինելու եմ դատարանում, որ ստանամ վճիռը: Նա ինձ ասած արդյո՞ք կարող է ինձ էլի զանգել ժամը 17:30-ից հետո, որպեսզի իմանա, թե ի՞նչ է վճռել Դատարանը: Ես պատասխանեցի, որ այո, որևէ խնդիր չկա: Ես եղա Դատարանում և վերցրեցի վճիռը և Դատարանից հետո գալու ճանապարհին դարձյալ զանգ ստացա հայցվորների ներկայացուցչի կողմից ժամը 17:50-ի շրջանում, վերջինս հարցնում էր ինձ, թե ինչ է վճռել Դատարանը: Ես էլ պատասխանեցի թե ինչ է վճռել բնականաբար և հավելեցի, որ վճիռն անհիմն է և մենք բողոքարկելու ենք այն:

Այս ամբողջ պատմությունը խիստ տարօրինակ է, քանի որ Դատարանի (դատավոր Նաիրա Ավետիսյանի) կազմը միշտ էլ բարեխիղճ պատասխանում է հեռախոսազանգերին և նման բան ինձ հետ, մասնավորապես սույն գործի ողջ քննության ընթացքում (շուրջ 2 տարի) չէր պատահել: Դատարանի (դատավոր Նաիրա Ավետիսյանի) կազմի համարն է 010-39-95-96, ներքին համարը 212: Այս ընթացքում բազմաթիվ անգամներ զանգել եմ Դատարանի նշված կազմ այս կամ այն տեխնիկական հարցը (նիստի օր և այլն) ճշտելու համար, նիստերից որևէ մեկից մի փոքր ուշանալու դեպքում տեղեկացնելու համար և այլն: Դատարանի այդ կազմը միշտ էլ պատասխանում է զանգերին: Նույնիսկ գիտեմ արդեն կազմի աշխատակիցների անունները (օգնական Ջեմմա, գործավար Արմինե, նիստերի քարտուղար Ռոզա): Սակայն զարմանալիորեն հայցվորների ներկայացուցչի զանգերն հանկարծ 20.07.2018թ.-ին դարձան անպատասխան և վերջինս որոշեց ինձանից տեղեկանալ գործի ելքի մասին: Այս գործողությունները կարող են վկայել այն մասին, որ հայցվոր կողմը նախապես հնարավոր է, որ տեղյակ է եղել գործի ելքի մասին և ներկայացուցիչն իր հերթին, փորձելով ցույց տալ, թե իբր ինքը չգիտի թե ինչ է լինելու վերջում, չի կարողանում ճշտել Դատարանից, ճարահատյալ զանգահարել է ինձ, որ ինձանից իմանա: Նման վարքագիծը խիստ պարզունակ է և ավելի շարժ հարցեր է առաջացնում... (Անհրաժեշտության դեպքում կներկայացնեմ նաև 20.07.2018թ.-ին իմ ստացած հեռախոսային զանգերի ցանկը):

Այսպիսով՝ առկա են ողջամիտ կասկածներ, որ Դատարանը (դատավոր Նաիրա Ավետիսյանը) սույն գործով չի եղել անաչառ և ավելին, **հնարավոր է, որ սույն գործով վերջինս մտած լինի որևէ կոռուպցիոն պայմանավորվածության մեջ հայցվոր կողմի հետ** (համադրելով և հաշվի առնելով Դատարանի խիստ անօրինական վճիռը և սույն բողոքում բերված հիմքերն ու հիմնավորումները):»:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 26.11.2018թ. թիվ 411-Ա/ԿԳ-18147 որոշմամբ փաստաբան Վարուժան Վարդանյանի (արտոնագիր թիվ 370) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագրքի**) 2.2.3, 5.1.1 և 5.2.1 (1) ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

30.11.2018թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Գևորգ Մարտիրոսյանին:

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

Փաստաբան Կարինե Բաղդասարյանը 05.03.2019 թվականին Խորհրդին ներկայացրել է բացատրություն: Վերջինս հայտնել է, որ իր գործընկերոջ՝ Վարուժան Վարդանյանի հետ վարել են բանակցություններ, ինչի արդյունքում պարզ է դարձել, որ Վարուժան Վարդանյանը որևէ միտում չի ունեցել իր գործարար համբավն արատավորելու և անձնավորված որևէ գործողություն չի կատարել իր նկատմամբ:

Դիմողը նշել է նաև, որ բողոքի հիմք հանդիսացած ՀՀ վերաքննիչ բողոքում նշված արտահայտությունները վերաբերել են միայն գործին, նախագահող դատավորին և որևէ միտում չի ունեցել որևէ ձևով որպես գործընկերոջ վիրավորել կամ արատավորել իր գործունեությունը:

Դիմողը հայտնել է նաև, որ փոխադարձ ըմբռման շրջանակներում ինքը և փաստաբան Վարուժան Վարդանյանը եկել են համաձայնության ինչի պարագայում գտնում է, որ անհրաժեշտություն չկա իր դիմումի քննությունը շարունակել, ուստի խնդրում է իր կողմից՝ 26.10.2018 թվականին ներկայացրած դիմումը թողնել առանց քննության և թիվ ԿԳ18147 կարգապահական գործով վարույթը կարճել:

Դիմողը թեև պատշաճ ծանուցվել է կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

08.11.2018 թվականին Պալատ է մուտքագրվել փաստաբան Վարուժան Վարդանյանի բացատրությունը: Բացատրությամբ փաստաբան Վարուժան Վարդանյանը հայտնել է, որ թիվ ԵԱԴԴ/0586/02/16 քաղաքացիական գործը քննվել է առաջին ատյանի դատարանում 2016թ. սկզբից մինչև 2018թ.-ի հուլիս ամիսը: Այդ գործով ինքը ներկայացրել է պատասխանողների իրավունքները: Պատասխանողներից մեկը Անուշ Ոսկանյանը (անունը, որը կրում է փաստացի Աննա) իրեն 07.07.2016թ.-ին տվել է դատական ներկայացուցչության լիազորագիր:

Հակառակորդ կողմից փաստաբան Կարինե Բաղդասարյանը 16.12.2016թ.-ին կայացած դատական նիստի ընթացքում հայտնել է, թե Վարուժան Վարդանյանի լիազորությունները պատշաճ չեն, քանի որ Անուշ Ոսկանյանի կողմից տրված լիազորագրում նշված չեն վերջինիս անձնագրային տվյալները:

Բացատրությամբ նշվել է նաև, որ Վարուժան Վարդանյանը պատասխան

փաստարկներ է ներկայացրել նշելով, որ իր լիազորությունները պատշաճ են, իսկ անձնագրային տվյալներ նշելը պարտադիր չէ օրենքով, լիազորագիրն էլ օրենքի պահանջներին համապատասխան ներկայացված է: 17.02.2017թ.-ին տեղի ունեցած դատական նիստի ընթացքում Կարինե Բաղդասարյանը դարձյալ առարկել է նշելով այն միտքը, որ անձնագրային տվյալներն անպայման պետք է լինեն, հակառակ դեպքում Վարուժան Վարդանյանի լիազորությունները պատշաճ չեն և ինքը չի կարող ներկայացնել Անուշ Ոսկանյանի շահերը, իսկ ինքը Կարինե Բաղդասարյանի անհիմն առարկությունների պատճառով նշել է, որ Կարինե Բաղդասարյանը լավ չի տիրապետում օրենքին՝ լիազորագրի մեջ անձնագրային տվյալների նշման պահանջի առկայության կամ բացակայության մասով: Ըստ Վարուժան Վարդանյանի՝ դա եղել է Կարինե Բաղդասարյանի անհիմն առարկության և իրեն ոչ պատշաճ լիազորագիր դատարանին ներկայացրած լինելու և այդպիսով անտեղի գործի քննությունը հետաձգելուն ուղղված գործողությունների պատասխանը:

Վարուժան Վարդանյանը նաև հայտնել է, որ թիվ ԵԱԴԴ/0586/02/16 քաղաքացիական գործով իր կողմից 21.08.2018թ.-ին ներկայացված վերաքննիչ բողոքը ներկայացվել է իր վստահորդների անունից, վերջիններիս պատվերով: Նշված վերաքննիչ բողոքն ուղղված է բացառապես վերաքննիչ քաղաքացիական դատարանին, դրանում բերված են առաջին ատյանի դատարանի (համապատասխան դատավորի) խախտումները և այդ խախտումների մասին հիմնավորումները: Նշված բողոքը շարադրելիս և ներկայացնելիս չի եղել որևէ նպատակ խեղաթյուրելու Կարինե Բաղդասարյանի՝ որպես փաստաբանի, վարքագիծը: Նշված վերաքննիչ բողոքում ներկայացված են նաև գնահատողական դատողություններ գործը քննող դատարանի (դատավոր Նաիրա Ավետիսյանի), ինչպես նաև գործով հայցվոր կողմի (հայցվորի) վերաբերյալ, այդ դատողությունները բխում են դատական համակարգում առկա որոշ խնդիրներից և բավարար փաստական կազմից նկատի ունենալով Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով սահմանված կարծիքի ազատության իրավունքը:

Փաստաբան Վարուժան Վարդանյանը 2018թ. դեկտեմբերի 22-ին ներկայացել է Նախապատրաստողի հրավերով և ի պատասխան Նախապատրաստողի հարցերին տվել է բանավոր բացատրություն՝ հայտնելով, որ ամբողջությամբ առարկում է դիմող Կարինե Բաղդասարյանի կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Ա.Զոհրաբյանին ուղղված գրության դեմ, հայտնելով որ դիմումում նշված փաստերը համարում է իրականությանը չհամապատասխանող, քանի որ նա ինչպես արդեն գրավոր ներկայացրած իր բացատրությունում հայտնել է փաստաբան Կարինե Բաղդասարյանին վիրավորելու կամ գրպարտելու նպատակ չի ունեցել, դատական նիստերի ընթացքում հնչեցրած իր կարծիքները եղել են զուտ գնահատողական դատողություններ: Իսկ ինչ վերաբերվում է վերաքննիչ բողոքում նշված արտահայտություններին, ապա տվյալ դեպքում ինքը ևս որևէ միտում չի ունեցել վիրավորելու և գրպարտելու, ինչպես նաև արատավորելու փաստաբան Կարինե Բաղդասարյանի պատիվը և բարի համբավը: Վերաքննիչ բողոքում նշված արտահայտությունները ևս եղել են գնահատողական դատողություններ: Ավելին, ինքը, վերաքննիչ բողոքում կատարելով իր գնահատողական դատողությունները, միտում չի ունեցել կասկածի տակ դնելու իր գործընկեր, փաստաբան Կարինե Բաղդասարյանի գործողություններն առ այն, որ վերջինս կոռուպցիոն պայմանավորվածությունների

մեջ է մտել դատարան հետ: Վերաքննիչ բողոքում իր կողմից նշված դատողությունները վերաբերել են բացառապես դատարանին և հայցվոր կողմի վարքագծին, և այդ կոնտեքստում ի նկատի չի ունեցել հայցվորի ներկայացուցչ Կարինե Բաղդասարյանին: Ուստի, կարծում է, որ նման պայմաններում, ինքը վարքագծի կանոնների որևէ խախտում թույլ չի տվել:

Պատասխանողը թեև պատշաճ ծանուցվել է խորհրդի նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն խորհրդի նիստին չի ներկայացել:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

29.01.2019թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստող անձ Գևորգ Մարտիրոսյանը կազմել է եզրակացություն:

31.01.2019թ. գործը հանձնվել է խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2019 թվականի մայիսի 08-ին, ժամը՝ 19:15-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (**այսուհետ նաև՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. Դիմողի և փաստաբան Վարուժան Վարդանյանը թիվ ԵԱԴԴ/0586/02/16 քաղաքացիական գործով հանդիսանում են հակառակորդ կողմերի փաստաբաններ:

2. Փաստաբան Վարուժան Վարդանյանի կողմից 21.08.2018 թվականին ներկայացվել է վերաքննիչ բողոք:

3. Վերաքննիչ բողոքում Վարուժան Վարդանյանի կողմից ներկայացվել է հետևյալը՝ *Վերոնշյալ պայմաններում (մանրամասն հիմքեր հիմնավորումները ներկայացված են ներքևում) Դատարանի (դատավոր Նաիրա Ավետիսյանի) կողմից նման վճռի կայացումը թույլ է տալիս կարարել գնահատողական դատողություն, որ սույն գործով դատավոր Նաիրա Ավետիսյանը չի եղել անկողմնակալ և անաչառ: Բացառված չէ, որ վերջինս ունեցած լինի նաև որևէ շահագրգռվածություն սույն գործով վճիռ կայացնելիս և այստեղ եղած լինի կոռուպցիա (ոչ թե որևէ կոռուպցիոն ռիսկ, ինչպես ընդունված է ասել հաճախ, այլ հենց կոռուպցիա: Սա պետք է պարզվի, իհարկե, համապատասխան մարմինների կողմից): Նման գնահատողական դատողություն կարարելու համար առիթ է հանդիսանում ևս մեկ ուշագրավ*

իրադարձություն, որը տեղի է ունեցել սույն գործով վճռի հրապարակման օրը 20.07.2018թ.-ին և որի մասին հարկ ենք համարում հայտնել նաև ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանին.

20.07.2018թ.-ին ժամը 12:00-13:00-ի սահմաններում ինձ պատասխանողների ներկայացուցիչ փաստաբան Վարուժան Վարդանյանիս, զանգահարեց սույն գործով հայցվորների ներկայացուցիչը (Կարինե Բաղդասարյան): Նա ասած, թե արդյո՞ք ես գնալու եմ այդ օրը դատարան վճռի հրապարակման նիստին, ինքը չի կարողանալու գնալ և բացի այդ էլ զանգում է դատարան, չի կարողանում կապվել դատարանի կազմի հետ, որ տեղեկություններ ստանա: Ես պատասխանեցի, որ այո՝ ես ժամը 17:30-ին լինելու եմ դատարանում, որ ստանամ վճիռը: Նա ինձ ասած արդյո՞ք կարող է ինձ էլի զանգել ժամը 17:30-ից հետո, որպեսզի իմանա, թե ի՞նչ է վճռել Դատարանը: Ես պատասխանեցի, որ այո, որևէ խնդիր չկա: Ես եղա Դատարանում և վերցրեցի վճիռը և Դատարանից հետո գալու ճանապարհին դարձյալ զանգ ստացա հայցվորների ներկայացուցչի կողմից ժամը 17:50-ի շրջանում, վերջինս հարցնում էր ինձ, թե ինչ է վճռել Դատարանը: Ես էլ պատասխանեցի թե ինչ է վճռել բնականաբար և հավելեցի, որ վճիռն անհիմն է և մենք բողոքարկելու ենք այն:

Այս ամբողջ պատմությունը խիստ տարօրինակ է, քանի որ Դատարանի (դատավոր Նաիրա Ավետիսյանի) կազմը միշտ էլ բարեխիղճ պատասխանում է հեռախոսազանգերին և նման բան ինձ հետ, մասնավորապես սույն գործի ողջ քննության ընթացքում (շուրջ 2 տարի) չէր պատահել: Դատարանի (դատավոր Նաիրա Ավետիսյանի) կազմի համարն է 010-39-95-96, ներքին համարը 212: Այս ընթացքում բազմաթիվ անգամներ զանգել եմ Դատարանի նշված կազմ այս կամ այն տեխնիկական հարցը (նիստի օր և այլն) ճշտելու համար, նիստերից որևէ մեկից մի փոքր ուշանալու դեպքում տեղեկացնելու համար և այլն: Դատարանի այդ կազմը միշտ էլ պատասխանում է զանգերին: Նույնիսկ գիտեմ արդեն կազմի աշխատակիցների անունները (օգնական Ջեմմա, գործավար Արմինե, նիստերի քարտուղար Ռոզա): Սակայն զարմանալիորեն հայցվորների ներկայացուցչի զանգերն հանկարծ 20.07.2018թ.-ին դարձան անպատասխան և վերջինս որոշեց ինձանից տեղեկանալ գործի ելքի մասին: Այս գործողությունները կարող են վկայել այն մասին, որ հայցվոր կողմը նախապես հնարավոր է, որ տեղյակ է եղել գործի ելքի մասին և ներկայացուցիչն իր հերթին, փորձելով ցույց տալ, թե իբր ինքը չգիտի թե ինչ է լինելու վերջում, չի կարողանում ճշտել Դատարանից, ճարահատյալ զանգահարել է ինձ, որ ինձանից իմանա: Նման վարքագիծը խիստ պարզունակ է և ավելի շատ հարցեր է առաջացնում... (Անհրաժեշտության դեպքում կներկայացնեմ նաև 20.07.2018թ.-ին իմ ստացած հեռախոսային զանգերի ցանկը:)

Այսպիսով՝ առկա են ողջամիտ կասկածներ, որ Դատարանը (դատավոր Նաիրա Ավետիսյանը) սույն գործով չի եղել անաչառ և ավելին, **հնարավոր է, որ սույն գործով վերջինս մտած լինի որևէ կոռուպցիոն պայմանավորվածության մեջ հայցվոր կողմի հետ** (համադրելով և հաշվի առնելով Դատարանի խիստ անօրինական վճիռը և սույն բողոքում բերված հիմքերն ու հիմնավորումները):»:

4. Դիմողը 05.03.2019թ. դիմումով խնդրել է առանց քննության թողնել իր կողմից ներկայացված դիմումը:

Նշված փաստերը հաստատվում են գործում առկա փաստաթղթերով, այդ թվում՝ Դիմողի և Պատասխանողի բացատրություններով, 05.03.2019թ. դիմումով:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Վարուժան Վարդանյանի (արտոնագիր 1148, ստացված՝ 15.12.2010թ.) նկատմամբ 2015-2019թթ. ընկած ժամանակահատվածում կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 26.11.018թ. թիվ 411-Ա/ԿԳ-18147 որոշմամբ հարուցված կարգապահական գործի):

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Վարուժան Վարդանյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

Կանոնագրքի 2.2.3 ենթակետը սահմանում է, որ մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Կանոնագրքի 5.1.1 ենթակետի համաձայն՝ մասնագիտության ընդհանուր բնութագիրը պահանջում է փաստաբանների միջև վստահություն և համագործակցություն, ինչը ելնում է վստահորդի շահերից, և այն նպատակ է հետապնդում, որ փաստաբանները խուսափեն ավելորդ դատավեճերից և այլ վնասաբեր գործողություններից, որոնք կարող են վար անդրադառնալ մասնագիտության հեղինակության վրա: Այս կանոնը չի կարող մեկնաբանվել, որպես մասնագիտության շահերը ընդդեմ վստահորդի շահերի դասելուն ուղղված կոչ:

Կանոնագրքի 5.2.1 (1) ենթակետի համաձայն՝ փաստաբանը չպետք է՝ թույլ տա այլ փաստաբանի նկատմամբ արժանապատվությունը և փաստաբանի համբավն արատավորող գործողություններ ու արտահայտություններ

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.8 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:

Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Կարինե Բաղդասարյանի կողմից իր դիմումից հրաժարվելու պայմաններում, երբ յուրաքանչյուր փաստի ապացուցման պարտականություն կրում է փաստը վկայակոչող կողմը, հաստատված չէ պատասխանող Վարուժան Վարդանյանի կողմից Կանոնագրքի 2.2.3, 5.1.1 և 5.2.1 (1) ենթակետերում նշված արարքի կատարումը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8. հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով, Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 26.11.2018թ. թիվ 411-Ա/ԿԳ-18147 որոշմամբ փաստաբան Վարուժան Վարդանյանի նկատմամբ հարուցված (արտոնագիր թիվ 1148) կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Արայիկ Ղազարյան

08 մայիսի 2019թ.
թիվ ԿԳ/58-Ա
ք. Երևան